

ներն իւրացնելու և կատարելագործելու: Կատարելագործութեան ձգտմամբ է արտալատուած մարդկային հոգու կենսականութիւնը և խրատեալ կառնութիւնը:

Ռամանսիկ չիօլային հետեւելով և միևնոյն ժամանակ բարեպաշտ լինելով՝ Ժուկովսկին իղէալին հասնելն անկարելի էր համարում այս աշխարհում: Կեանքի մէջ կարծես ներկան գութիւն չունի նրա համար, այլ իսկական կեանքն անցեալի և ապագայի մէջն է: Նրա կարծիքով «քրիստոնէութիւնը բանալով մեր հոգու խորքերը՝ գրաւեց մեզ դէպի հոգեկան աշխարհը, արտաքին աշխարհի հետ կապակցեց ներքին աշխարհը, որ և արտաքույն իրական բանաստեղծութեան մէջ»: Բանաստեղծութիւնը ձգտելով կապակցութեան հոգի ներշնչել այդ երկու աշխարհներին, ինքն էլ կրօնական է դառնում: Եւրոպայում և Ժուկովսկին ասում է. «Բանաստեղծութիւնը երկնային կրօնի երկրային քուրն է»: Բանաստեղծութիւնը պէտք է ազդեցութիւն ունենալ ժողովրդի դաստիարակութեան, նրա հոգեկան կեանքի վրայ: Բանաստեղծական ոգերութիւնն երկնային պարգև է: Ահա այս գաղափարները բանաստեղծութեան նշանակութեան մասին նորութիւններ էին ռուսաց գրականութեան համար:

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆԻ ՔԱՌԱՄՆԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

Ամուսնու 19-ին օրը Ֆիլիսի հալ գրագէտների դասը տօնեց լալտնի մանկական գրող պ. Ղ. Աղալեանցի գրական գործունէութեան քառասնամեակը:

Աղալեանցը ծնուել է 1840 թուին Բօլնիս Խաչէն գիւղում և իւր ուսումը ստացել է Ներսիսեան Դպրոցում: Բանաստեղծութիւնը գրաշարութիւն անել է, էնֆիւսիանցի տպարանում և շարում էր «Առուներ» ամսագիրը, որով և օրական հացը վաստակում: Բայց և միաժամանակ ինքնակրթութեամբ աշխատում էր աւելացնել իւր մտաւոր պաշարը:

Գրաշարութիւնը շարունակեց նա մինչև 1862 թուականը և այդ թուին հրատարակեց նա իւր անդրանիկ բանաստեղծութիւնը «Մեղու Հալաստանի» լրագրում, որի եռանդուն աշխատակիցը դառաւ նա Խոթանասնական թուականներին:

Միշտ լառաշաղիմելու ձգտումով՝ այդ թուին նա գնաց Ռուսիայի մայրաքաղաքը, ուր մի կողմից ինքնակրթութեամբ զարգանում էր, իսկ միւս կողմից գրաշարութեամբ պարսպում: 1867-ին վերադարձաւ նա Թիֆլիս և հրաւիրուեց Էջմիածին իբրև տպարանի կառավարիչ: Ուր ապա վարեց «Արարատ» խմբագրի պաշտօնը: Այնուհետև Աղալեանցը նուիրուել է ու-

սուցյութեան և պաշտօն է վարում գաւառական քաղաքներում որպէս ուսուցիչ. ապա պ. Գէորգ Բարխուդարեանից լստոյ նորան լանձնուեցաւ Թիֆլիսի թեմի հայ. ծխական դպրոցներէ թեմական տեսչի պաշտօնը, որ վարեց մինչև 1889 թուականը:

Բայց Աղալեանցը աւելի լայտնի է որպէս մանկական գրող-վիպագիր և ալի ասպարիզում նա առաջինն է և գուցէ միակը. նորա մանկական գրութիւններից մեզ լայտնի են՝ «Անահիտը», «Արեգնաղան», զանազան մանր լողութիւններ «Աղբիւր» ամսագրում. վիպական գրութիւններից՝ «Յարութիւն և Մանուէլը»,



«Տօրք Անգեղ», «Երկու քոր», բանաստեղծութիւնների ժողովածուն. ունի զանազան աշխատութիւններ հայկական հնչիւնների մասին և ալ և ալ թարգմանական գրութիւններ:

Աղալեանցը աշխատակցել է «Փորձ» և «Մուրճ» ամսագրերին, «Տարադ» և «Մշակ» թերթերին, «Աղբիւր» ամսագրի մշտական աշխատակիցն էր և երբեմն նաև խմբագրի պաշտօնակատար: Նորա Հայոց լեզուի տարրական ուսման դասագրքերը կազմուած են իրան լատուկ դեղեցիկ հալերէն լեզուով ու դիւրամբռնելի

ոճով և եթէ չունենար իւր նոր ուղղագրութիւնը, թերևս ամենից տարածուած դասագրքերը լինէին հայ դպրոցներում:

Ի պատիւ նորա այս երկարամեայ անխռնջ գործունէութեան՝ պ. Աղալեանին ճաշ տրուեցաւ Թիֆլիսի ալգիներէից մէկում, որին մասնակցում էին մօտ 150 հոգի: Ճաշի միջոցին կարդացուեց Վեհ. Հալրապետի օրհնութեան կոնդակը, ուղերձներ զանազան հաստատութիւններից և բազմաթիւ հեռագրական շնորհաւորութիւններ գաւառներից: «Լուսալի» խմբագրութիւնը ևս հարկ համարեց իւր կողմից շնորհաւորել բա-մամեայ հայ գործչի հանդիսաւոր տօնախմբութիւնը: